№ 204 ՈՒՐԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՍԻՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 204

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԴԻԱՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

ՄՇԱԿ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Սեպտեմբերի 1-ից միինչև տարվայ վերջը 4 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома П. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՀՅ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՖԼ. ՍՏ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Սօլօլակ, Լերմօնտօվսկայա, 21.

Երկու բաժանմունք: Ընդունվում են երեխաներ 4 տարեկան հասակից:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի:

Մանկական պարտէզին կից կը լինեն երեկոյեան պարապմունքներ: Ձեռարուեստ, երգեցողութիւն, մարմնամարզութիւն և այլն, խմբային պարապմունքներ օտար և տեղական լեզուների

Ընդունվում են և գիշերօթիկներ: (հ. ու. կ. ե.) (առ.) 951. 5—2

ԶԿՆԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Պուշկինսկայա փող., տ. Սունդուկեանցի № 23, ռուսաց սեմինարիայի հանդէպ

ՏԷԼԷՖՕՆ № 395 ՏԷԼԷՖՕՆ № 395

Ամեն օր անընդհատ ստացվում են օսէտրինա, սէվրիւգա, լաոսոլինա և հատիկաւոր խաւեար, նոյնպէս և ձկնեղէն-մթերքներ: Վաճառվում են բարեխիղճ գներով:

Յարգանքով Ս. Ղուկասեան

(օ. մ.) առ. 919. 20—5

Շաբաթ, սեպտեմբերի 19-ին

տեղի կունենայ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

որի պարապմունքի առարկաները կը լինեն՝

ա) Ընթացիկ գործեր,
բ) Զեկուցում ընկերութեան ամառվայ գործունէութեան մասին:
գ) Էջմիածնի հողերի ոռոգման խնդիրը. զեկուցումներ՝ պ. պ. Կ. Մելիք-Շահնազարեանի, Գ. Կիրակոսեանի և ուրիշների:

Նիստը տեղի կունենայ Կովկ. Գիւղ. Ընկ. դահլիճում (Барятинск. ул.) երեկոյեան ժամը 7½-ին:

Կարող են ներկայ լինել և կողմնակի անձեր:

(ու. շ.) (առ.) 956 2—1

ԹԻՖԼԻՍԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Երթևեկ հիւանդների համար ամեն օր, Ալեքզանդրայա 8, տ. Էնֆիաճեանցի

Տելեֆոն 695

Ն. Գ. ՅԷԴՕՐՕՎ, ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:

Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻԶԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս եւ կաշուէ հիւանդութիւններ:

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանացկ հ., 1—2 ժամը:

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:

Յ. Ս. ՄՈՒՍԱԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ա. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:

Ն. Գ. ԶԻԶԻՆԱԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կօպէկ:

(օ. մ.) առ. 38. 100—92

ԲԺԻՇԿ

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ մորթու հիւանդութիւնների

→ վերադարձաւ ←

և առաջվայ նման ընդունում է հիւանդների

Ընդունելութիւնը ամեն օր { 1—4 ժամը ցերեկվայ, 7—9 ժամը երեկոյեան

Միխայիլեան պր. 38 (Բէալական դպր. դիմաց), հեռ. 663.

(առ.) 841. 10—8

ԱԼՊԻԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ

Պետերբուրգից Կովկաս է եկել մի պաշտօնեայ՝ պարզելու փորձնական կայարանների հիմնարկութեան խնդիրը:

Այդ կայարանների մէջ առանձին նշանակութիւն է տրվում ալպիական կայարանին:

Ի՞նչ է ալպիական կայարանը:

Այնպիսի փորձնական կայարան, որը գործում է լեռնային շրջանում և պարզում է լեռնային գօտիի մնտեսութեան հանգամանքները:

Դա այն շրջանն է, ուր գտնվում են Փամբակը, Լօռին, Շիրակի մեծագոյն մասը, Ծաղկաձորը, Գեղարքունիքը, Վայոց ձորը, Սիւնիքը և միւս լեռնաստանները:

Այդ շրջանի մնտեսութիւնը բոլորովին տարբերվում է տափարակի այն շրջանից, ուր բուսնում են տաք երկիրների արմատներ և պտուղներ, օրինակ խաղող, դեղձ, բամբակ և այլն:

Լեռնային շրջանը ցուրտ շրջան է և իր բուսականութեամբ յիշեցնում է հիւսիսային երկիրները: Այդ շրջանում սահմանափակ է գիւղատնտեսութեան ճիւղերի զարգացումը: Ամենից մեծ տեղ բռնում են հացաբոյսերի մշակութիւնը և անասնապահութիւնը:

Բայց այդ շրջանում էլ կարելի է մեծապէս ճոխացնել մնտեսութիւնը, եթէ մտցվեն այն բարւոքումները, որոնք մեզնից առաջ մտցրել են եւրոպական այնպիսի երկիրներ, ինչպէս են Շվէյցարիան, Դանիան, Գերմանիան, Շվեդիան, Ֆինլանդիան, որոնք նոյնպէս ունեն ցուրտ կլիմա և ապրում են գլխաւորապէս անասնապահութեան եկամուտներով:

Եւ փորձը ցոյց է տալիս, որ Անդրկովկասի մի քանի մնտեսութիւններ, որոնք մտցրել են կատարելագործութիւններ անասնապահութեան, կաթնատնտեսութեան, երկրագործութեան մէջ, արդէն հասել են գեղեցիկ հետևանքների և բարձրացրել են հողի արդիւնաբերութիւնը:

Սակայն Անդրկովկասի լեռնային տընտեսութեան պայմանները դեռ չենպարզված կատարելապէս և նորամուծութիւններ պատուաստելու ժամանակ առաջ են գալիս մի շարք դժուարութիւններ: Անհրաժեշտ է, որ ինքը երկիրը ունենայ իր սեփական փորձերը և դիտողութիւնները, ինքը մշակի այն խնդիրները, որոնց վերաբերութեամբ չը կան հաստատ ցուցմունքներ օտարերկրեայ կեանքում:

Եւ ահա ալպիական կամ լեռնային կայարանը պէտք է գայ բաւարարութիւն տալու այդ պահանջին, պարզելու մեր լեռնաստանների մնտեսութեան առանձնայատկութիւնները և սութեան առանձնայատկութիւնները մշակելու բարւոքումների ծրագիրներ մեր լեռնային շրջանի համար:

Թէ որտեղ կը հիմնվի ալպիական կայարանը—առ այժմ դժուար է ասել: Ցանկալի է, որ նա հաստատվեր Փամբակի կամ Լօռու շրջանում, որովհետև նա այն ժամանակ կը լիներ կենտրօնական մի կէտում, որը կարող կը լիներ ծառայել մի ընդարձակ շրջանի, սկսած Թիւրքիայի սահմաններից մինչև Գանձակի նահանգի լեռնաստանները:

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ

Էջմիածին, 14 սեպտ.

Ես հեռագրեցի երէկ կաթողիկոսի օծման արարողութիւնը, որ կայացաւ կիրակի, սեպտ. 13-ին:

Եկեղեցական այդ ծիսակատարութիւնը, ինչպէս տեսանք, որի կատարմանն էր սպասում Մատթէոս II Կաթողիկոսը իր հայրապետական լիակատար իշխանութեան մէջ մտնելու համար, գրաւել էր հայ ժողովրդի և ներկայացուցիչների խուռն, աւելի քան 25,000 բազմութիւն Թիւրքիայից, Ռուսաստանից և նոյնիսկ օտարազգիներ: Այդ երեւոյթը ցոյց է տալիս, թէ, չը նայելով վերջին տարիներում մտքերի մէջ առաջացած յեղաշրջումների և տատանումների, Էջմիածինը այնու ամենայնիւ հայերի մեծամասնութեան համար ահագին և կարևոր նշանակութիւն ունի:

Ինչպէս հեռագրեցի, ուրբաթ, սեպտ. 11-ին, երեկոյեան դէմ հաւաքված պատգամաւորները և ներկայացուցիչները, թւով մօտ 50 հոգի, ներկայացան Կաթողիկոսին և Հ. Առաքելեան ի դիմաց ամենքի արտասանեց հետևեալ խօսքերը.

«Վեհափառ Տէր.

«Թոյլ տուէք այստեղ համախմբված պատգամաւորների և ներկայացուցիչների կողմից հայ ժողովրդի Ձերմ շնորհաւորութիւնները յայտնել Ձեր Վեհափառութեան առաջիկայ օծման առիթով ի գահ հայրապետութեան ամենայն հայոց և դնել մեր որդիական խորին յարգանքի հաւատիքը հայրապետական գահի առաջ:

«Այն հանգամանքը, Վեհափառ Տէր, որ Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի հայութեան զանազան կէտերից այստեղ համախմբվել են ներկայացուցիչներ և պատգամաւորներ, շնորհաւորելու համար ձեր առաջիկայ օծումը, պէտք է խորապէս հասկանալի Ձեզ, որ նոյնիսկ այն բօպէին, երբ եկեղեցու և հայրապետական գահի գոյութեան դէմ ձայներ են լսվում, ճիշդ է, հայ ժողովրդի մի աննշան փոքրամասնութեան կողմից, հայ ազգը, հայ ժողովուրդը իր ամենաստուար մեծամասնութեամբ դեռ զօրված և շաղկապված է շատ սերտ կապերով հայոց ժողովրդական եկեղեցու և նրա գահակալների հետ:

«Հայ ազգը, Վեհ. Տէր, մի տարի առաջ, իր պատգամաւորների ձեռքով, ընտրեց Ձեզ, իբրև հայ եկեղեցականութեան մէջ ամենից աւելի ձեռնհաս և արժանաւորագոյն անձին, ի գահ Լուսաւորչի, համոզված, որ Դուք կը հանդիսանաք արժանաւոր յաջորդ Սահակի և Մեսրոպի:

«Մենք գիտենք, Վեհ. Տէր, որ ծանր, խիստ ծանր է Ձեզ յանձնված պաշտօնը, ծանր է այն խաչը, որ դրվեց Ձեր ուսերի վրա և որը բառնալու համար Դուք կարօտ էք հայ ժողովրդի աջակցութեան: Արդ, Վեհ. Տէր, թոյլ տուէք մեզ, այդ ժողովրդի ներկայացուցիչներիս, հաւատացնել Ձեզ, որ նա պատրաստ է ամեն տեսակ աջակցութիւն տնել Ձեզ Ձեր առաջիկայ գործունէութեան մէջ, ի կատար ածելու համար բոլոր այն բարեկարգութիւնները, բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ և անյետաձգելի են հայ եկեղեցու և ժողովրդի հոգևոր-մտաւոր-բարոյական բարգաւաճման համար:

«Զօրացէք, Վեհ. Տէր, այն սիրով, համակրութեամբ, որ հայ ազգը տածում է դէպի Ձեզ, իր արժանաւոր Ընտրեալին, և ընդունեցէք մեր շնորհաւորութիւնները»:

Մատթէոս II այս ողջոյնին պատասխանեց մի երկար ճառով, որի մէջ, շնորհակալութիւն յայտնելով պատգամաւորներին իրանց ողջոյնի և բարեմաղթութիւնների համար, շեշտելով այն դժուարութիւնները, որոնց նա անհրաժեշտաբար հանդիպելու է իր առաջիկայ գործունէութեան ժամանակ, բացատրեց, թէ ինչու հայ ժողովուրդը պէտք է սիրէ, ընդգրկէ իր ազգային ժողովրդական եկեղեցին, որը նա կարող է օգտակար կերպով կառավարել միայն ժողովրդի աջակցութեամբ:

Շաբաթ օրը վաղ առաւօտից արդէն սկսել էր Էջմիածնի շրջակայ գիւղերից և Երևանից ժողովրդի և ուխտաւորների մեծ հոսանքը:

Թէև վանքը իր բոլոր ունեցած շինութիւնները—հիւրանոց, ճեմարան, հիւանդանոց, սինոդ, միաբանութեան խուցերը, նոյնիսկ վեհարանի մի մասը—յատկացրել էր պատգամաւորների և պատաւոր հիւրերի ընակութեան համար, բայց դրանք շատ և շատ անբաւական էին պատսպարելու ամենքին. ուստի Ներսիսեան լճի առաջ, անտառում և զանազան տեղերում վրաններ էին սարքված: Շատերը գիշերում էին բացօդեայ: Լճի ափը երեկոները ներկայացնում էր մի խայտաճամուկ, բայց գեղեցիկ տեսարան. զոյնզոյն լապտերների լոյսը անդրադառնալով ցոլանում էր լճի ջրերի մէջ. աշուղների սազը, երգերը թնդում էին զանազան տեղերում, և պատանիներ, ջահել աղջկերք պարեր էին կազմում և զուարճանում: Սաղ, երգ, պար, գինի, իսկ վանքի բակում նաև երաժշտութիւն, ամբոխի ժխոր, աղաղակ, ծիծաղ՝ այս ամենը ստեղծում էր մի թէև տարօրինակ, բայց ուրախ տրամադրութիւն առաջացնող տեսարան:

Սեղանատունը ամեն օր և երեկոյ հաշում էին 200—300 հոգի: Չը նայելով այդքան մեծ բազմութիւն կառավարելու, հիւրասիրելու անհուն դժուարութիւններին, պէտք է ասել, որ կարգադիր մասնաժողովը պատուով և աջողութեամբ դուրս եկաւ իր ծանր պաշտօնի միջից և նա, արդարև, արժանի է շնորհակալութեան իր ջանքերի և աշխատութիւնների համար: Մաքրութիւն, առատութիւն սեղանատան մէջ խիստ աչքի էր ընկնում, և դժուար թէ կարելի լիներ դրանից աւելին կատարել:

Ուրբաթ, երեկոյեան, ընթրիքից յետոյ, տպարանի շինութեան մէջ, նախագահութեամբ Բ. Դօլուխանեանի, Հ. Առաքելեանի և Գ. Խատիսեանի, կայացաւ եկած պատգամաւորների մասնաւոր խորհրդակցութիւն: Բանալով ժողովը, Հ. Առաքելեան յայտնեց, թէ, տեղեկութիւններ ունենալով որ Կաթողիկոսը, օգտվելով այն հանգամանքից, որ Էջմիածին են եկել և գալու են ազգային-եկեղեցական գործերով հետաքրքրվող անձինք և զանազան ներկայացուցիչներ, մտադիր է մի քանի անյետաձգելի և կարևոր խնդիրների վերաբերմամբ (եկեղեցական - վարչական, մնտեսական, դպրոցական) կարծիքներ և լուսաբանութիւններ լսելու, այդ պատճառով ինքը և ընկերները անօգուտ չը տեսան գումարել ներկայ մասնաւոր խորհրդակցութիւնը և կատարել կարծիքների փոխանակութիւն:

Ապա Հ. Առաքելեան յայտնեց, որ կաթողիկոսական ընտրութեան համազգային ժողովը, անցեալ տարի, առենապետութեամբ Մինաս Չերազի, կայացրել է մի թեմամբ Մինաս Չերազի, կայացրել է մի շարք որոշումներ, որոնք պէտք է ներկայացվեն Ամենայն Հայոց Կաթողիկոսին նրա օծումից յետոյ, և այդ պաշտօնը կատարելը յանձնել է թեմական այն պատգամաւորներին, որոնք օծման օրը կը գտնվեն Էջմիածնում: Այժմ այդ թեմական պատգամաւորներից 3 հոգի միայն կան—Վ. Եղիազարեան (Երևանի թեմի), Հ. Առաքելեան (Ղարաբաղի թեմի) և Յ. Ամիրխանեան (Նիկոմիդիայի թեմի), որոնք և ներկայացնելու են Կաթողիկոսին որոշումները:

Ժողովը կամեցաւ լսել այդ որոշումները, որ և կարդացվեց:

Յայտնելով այս ամենը և բառնալով ժողովը, Հ. Առաքելեան առաջարկեց ընտրել նախագահ: Ընտրվեց Գարեգին վարդապետը: Խորհրդակցութեան հետևանքն այն պետք: Խորհրդակցութեան հետևանքն այն եղաւ, որ ընտրվեց մի մասնաժողով, բաղկացած 9 հոգուց, որին և յանձնվեց ուրուագծել ընդհանուր կէտերով այն հարցերը, որոնց մասին հարկ կը լինի կարծիքներ յայտնել և լուսաբանութիւններ տալ Վեհ. Կաթողիկոսին, երբ նա կը կատարվի հարցնել այդ կարծիքը և ստանալ մենայ հարցնել այդ կարծիքը և ստանալ լուսաբանութիւնը: Ընտրվեցին Բ. Դօլուխանեան, Կ. Խատիսեան, Հ. Առաքելեան, բժշ. Թ. Զաքարեան, Գ. Կոստանեան, Արամ Առաքելեան, կարապետ վարդապետ, Մեսրոպ վարդապետ և Ս. Տիգրանեան:

Ուրբաթ օր կէսօրից յետոյ եկաւ Երևանից և Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզէնը, ներկայ լինելու Կաթողիկոսի երդման և օծման, իբրև ներկայացուցիչ կառավարչական բարձր իշխանութեան:

Շաբաթ օր, առաւօտեան պատարագից յետոյ, տեղի ունեցաւ երդումն: Հ. Ա.

(Կը շարունակվի)

Գօրի, 14 սեպտեմբերի

Կիրակի, սեպտեմբերի 13-ին, մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցվեց Վեհափառ Կաթողիկոսի օծման առիթով. ներկայ էր երեք եկեղեցու հոգևորականութիւնը: Աւագ քահանայ Եղիշէ Տէր-Սահակեանցը մի քարոզով բացատրեց հանդիսականներին օրվայ նշանակութիւնը, և դիսականներին օրվայ նշանակութիւնը, և ապա սկսվեց հանդէսը: Եկեղեցին զարդարված էր զոյնզոյն վարդերով և ծաղիկներով. ներկայ էին նմանապէս հայոց դպրոցի աշակերտ-աշակերտուհիները իրանց ուսուցչական կազմով: Արմ. Մարութեանց

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՐՕԿԿՕՅՈՒՄ

Մելիլիա, 16 սեպտեմբերի

Սպանական զօրամասը պատահմամբ կիրճերում գտաւ մօտ 100 սպանական զինուորների և օֆիցէրների դիակներ, որոնք ընկել էին սեպտ. 10-ի և 14-ի կռիւներում: (Հ. Գ.)

Մադրիդ, 16 սեպտեմբերի

Մելիլիայից պաշտօնապէս հաղորդվում է, որ սեպտ. 15-ին, գիշերվայ ժամը 3-ին, 500 մաւրեր յարձակվել են Սուկէլարբի մօտերը բանակ դրած զօրախմբի վրա: Սպանացիները պատասխանեցին կրակով:

Հետախուզութիւնների ժամանակ սպանվեցին 4 զինուորներ, վիրաւորվեցին մի կապիտան և 14 զինուորներ: Թշնամին ստիպված էր նահանջել:

Թագաւորը դիմեց գէներալ Մարինին, շնորհաւորելով նրան և քաջարի զօրքերին Սօլուանի մօտ տարած փայլուն յաղթանակի համար: (Հ. Գ.)

Մադրիդ, 16 սեպտեմբերի

Առաւօտեան ժամը 7-ին սպանական զօրքերը դրաւեցին Գրուգու լեռը: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 16 սեպտեմբերի

Բագուի վրայով անցաւ պրինց Զիլլի-Սուլթանը: Պրինցը լրագրի թղթակցին յայտնել է, որ Գիլանի ազգաբնակութեանը ամեն տարի նուիրում է 12,000 թուման: («Հ. Գ.»)

Բագու, 16 սեպտեմբերի

Երևան հասնվեց խօլերային մի դէպք: Հիւանդացաւ 14 տարեկան մի տղայ: (Հ. Գ.)

Թաւրիզ, 16 սեպտեմբերի

Վագիրի արշաւանքը ֆէդայիներով դէպի Ղարադաղ Բանիմ-խանի դէմ՝ յետաձգվեց մինչև Արտաբիլի նախկին նահանգապետ Բաշիդ-ուլ-Միւլքի Թաւրիզ գալը: Վերջինս նշանակված է Ղարադաղի նահանգապետ հրաժարված Իշլաֆ-ուլ-Միւլքի փոխարէն:

Սաթթար-խանը գտնվում է Արտաբիլում, ուր ձերբակալել է պարսկահպատակ մի քանի կովկասցի ֆէդայիների: (Հ. Գ.)

Ստոկհոլմ, 16 սեպտեմբերի

Կառավարական կոմիսարի ջանքերը՝ դադարեցնելու գործադուլը՝ աջողութեամբ չը պսակվեցին: (Հ. Գ.)

Բրիւսսէլ, 16 սեպտեմբերի

Երէկ բացվեց ծովային իրաւունքի երրորդ միջազգային կոնֆերէնցիան: Մասնակցում են 60 պատգամաւորներ

25 պետութիւնների կողմից։ Նախագահ ընտրվեց բէլգիական մինիստր Բէրնարտը։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 8 սեպտ.

Վարչական պատուիրակութիւն մը, մէկ օր առաջ, Հիլմի փաշային ապարանքը երթալով, բանակցած է պատրիարքական հրաժարագրի մասին։ Վարչապետը, թերթերու գրածին նայելով, կարդ մը կէտերու մասին համաձայն գտնուած է և տրամադրութիւն ցուցուցած բաւարարութիւն տալու։

Մեր գլխաւոր պահանջումներն են թէ Ադանայի, ինչպէս և Կիլիկիոյ գլխաւոր կեդրոններու մէջ, փոխանակ անչնչի գիւղացիներ, մեծ թուով, կախաղանի չուաններուն մէջ ճօճել տալու, աւելի լաւ է, արդարութեան համեմատ, քանի մը գլխաւոր ոճրագործները զսպել և պատժել։

Կառավարութիւնը ինքն ալ խոստովանելով, թէ աւելի լաւ է, որ արդարադատութեան գործը այդ կերպով քալէ, մէկ կը բերէ զինուորական ատեաններուն անկախութիւնը, և որով արդարադատութեան գործն ալ կը մնայ ատկախ։

Պատրիարքարանը կը պնդէ թէ ցորչափ խուժանը իր աչքովը տեսնէ որ ոճիրներու, վայրագութեանց բուն հեղինակները մեռան անձեռնմխելի և խեղճ ու կրակ, ողորմելի շինականներ պատժուին, արդելք չկայ, որ վերջապէս օր մը միևնոյն աղէտաւոր դէպքերը տեղի չունենան ի վնաս քրիստոնեայ տարրերու։ Մեր հաշիւովը, պէտք է պատժուէին Զէվադ-բէյը, Իհսան Ֆիքրին, Աբդիլ Կադերը, Զէբէլի կայմակամ Անաքը։ Ու այդքանը պիտի բաւէր արդարութեան գործին համար։

Հիլմի փաշան, Զէվադ-բէյի արդարացումին համար, մատնանիշ կընէ մեղմով անոր 40 հեռագիրները, որոնք դէպքերէն առաջ քաշուած են զինուորական նոր ուժեր հասցնելու համար։ Միւսներուն համար ալ, լուին կերպով, ցոյց կուտայ այն բողոքներն ու սպառնալիքները, որոնք ղրկուած են Կիլիկիայէն՝ արիւնոտ դէպքերը Կիլիկիոյ ամէն կէտերու վրայ նորոգելու, եթէ զինուորական ատեանը ձեռք վերցնէ այդ քանի մը առանձնաշնորհեալ ճիւաղներու վրայ։

Այսպիսի տարօրինակ դրութիւն, տատանում կառավարութեան և պատրիարքի մէջտեղ։ Թէև քանիցս գրուեցաւ, թէ Հիլմի փաշա, ինչպէս յունաց պատրիարքին պատասխանած էր թէ պատրիարքարանը քաղաքական պաշտօնատուն չէ, պէտք է իր առանձնաշնորհութիւնները սահմանափակէ եկեղեցական, հոգևորական շրջանի մէջ, նոյն դիտողութիւնները ըրած ըլլայ նաև մեր պատրիարքի մասին, բայց ճիշդ չէ։ վարչութեան ատենապետը հերքեց այդպիսի առարկութեան մը գոյութիւնը և յայտարարեց բացէ ի բաց, թէ կարդ մը լրագրողներու գործն է ատ։ Բ. Դուռը, երևոյթներէն դատելով, կուզէ, հնար եղածին չափ, խնամողաբար երթալ մեր պատրիարքարանի հետ։

Թէև քիչ մը ուշ, գուցէ մեզի տուած դառն փորձերով, թիւրքերը համոզուին, որ երկրին տարրերուն մէջ, իր դիրքին պատճառաւ, միակ տարրն է հայը, որ առաւելապէս կապուած է օսմանցութեան ճակատագրին։ Ոչ յունական սեղալ իպեան (մեծ գաղափարը) ունինք՝ օր մը մեր խաչը բարձրացնելու Այա-Սոֆիա մզկիթին բարձունքը, ոչ բուլգարական Մակեդոնիան՝ օր մը յաղթական բանակները առաջ մղելու Մարեցայի սահմաններուն, բարձրացնելու բուլգարական դրօշակը։ ու ընդհակառակ, ցրուած՝ երկրին ամէն կէտերուն վրայ, թիւրքերու և քիւրդերու բնակակից, դրացի, շահակից, փափագող ենք, որ ամբողջ երկիրը Մայ իր ամբողջութեանը մէջ ու ամէն տեղ ապրինք աշխատանքով, մշակուելով, զարգանալով։ Խելահաս թիւրքերը ըմբռնած են այդ կէտերը։ մաղթելի է, որ տարածուին գտնէ այդ կերպ հասկացողութիւնը, և շուտ ցրուին ցնորական հնթադրութիւններ։

Մեր թերթերու մէջ սկսուած են յիմար կռիւներ։ Ընթերցողները, մեծ մասամբ, այլանդակ լուրերու աւելի հետամուտ են։ Հայհոյութիւնը ոչ նուազ ախորժելի ապրանք է։

Այսօրերս շատ կը խօսուի, կը գրուի Վանի նոր սերունդի մասին։ Եթէ ըսուածները ստոյգ են, անշուշտ մենք կը ցաւինք, առանց սակայն արդարացնելու այն կեղծ նախանձախնդութիւնը, որով պօլսական հայ մամուլը, մեծ մասամբ, զինուած է։ Երուսաղէմի վանքը տարիներով մատնուած է թալանի, գլխաւոր դերակատարները մայրաքաղաքի մէջ են, ձեռք անցուած նամակները խոստովանութիւններ կընեն, յայտնութիւններ կըլլան ատոնց մէջ, ու մեր մամուլի այդ ներկայացուցիչները անուշիկ փրազներով կը քքսուին ատոնց քղանցքներուն, պաշտպանութիւն կը խոստանան, խմբակցութիւն կը կազմեն։

Կարծիք կայ, թէ հրապարակային այդ փորձերը ուրիշ բան չեն, եթէ ոչ նոր հարցերով, նոր զրպարտութիւններով ձգձգելու սաղիմական հարցին վերջնական լուծումը,— բան մը, որ գրուած էր Ղևոնդի հռչակաւոր նամակին մէջ, այսինքն ազգ. ժողովի նիստերը ամուլ անցնել։

«Ազատամարտ» ու «Հայրենիք» մէջ բացուած է պայքար մը։ Վանի պատրիարքական տեղապահ՝ Զաւէն վարդապետ և ուրիշներէ գրուած նամակներով հասկցուած է, թէ տեղացի կարգ մը երիտասարդներ, քաղաքական կուսակցութեանց անունով, իրաւունք ստացած ըլլան ըստ հաճոյս տնօրէնութիւններ ընելու եկեղեցական, վարչական և կալուածային հարցերու մասին։ «Ազատամարտ» չուզեց կուսակցութեան գործ տեսնել այդ շարժումներուն մէջ, որու ինքն ալ չէ հաւանիր։ «Հայրենիք», Նորատունկեանի անկումին մէջ ալ, ուզեց տեսնել կուսակցութեան համաձայնութիւններ «Իթթիհատի» հետ։ Ու ատոնք եղան գլխաւոր շարժառիթներ պայքարի մը, որ սկսած է երկու ազատական թերթերուն մէջ։ Առայժմ երկուստեք փոխանակուած բառերն ու խօսքերը, գոնէ չափով մը, սահմանի մէջ են. կը վախցուի, որ պայքարը՝ վէճի փոխուի, վէճը՝ չափազանցութեան տարուի, և հանրութիւնը հանդիսատես ըլլայ անախորժ բանակռիւներու։

Այս օրերուս, մանր մունր թերթերու մէջ, համաձայնութիւն մը կայ «Ազատամարտի» դէմ ոչ միայն պայքարելու, այլ կռուելու։ Ակզբունքէ աւելի, հացի կռիւ մըն է։ Կռիւին, համաձայնութեան ներքին շարժառիթը ատ է խկապէս, թէև, արտաքին ձևով, իւրաքանչիւր թերթ կը յայտարարէ, թէ կը կռուի սկզբունքի հարցով։

Քանի մը օրէ ի վեր բօյկոտի ալ ջնջեր կան անկիւններու մէջ. առաջամարտիկներն են լրագրավաճառները,— մեր ընկերութեան ամենէն ողորմելի մարդիկը, որոնք, քիչ կաշառքով, այս-ինչ թերթը կը դատապարտեն յօդուտ ուրիշ թերթի մը։

Կրսուի թէ Օրմանեանի դէմ եղած խուժանային ցոյցերը, ինչպէս որ գրեց յայտնապէս գլխաւոր դերակատարներէն մին, եղած են պարզօրէն ատոնցմէ, որոնք սաղիմական հարցին մէջ առանձնաշնորհեալ կարծուածներն եղած են։ Նոյն կասկածը կը տիրէ այժմ, թէ Վանի, Աղթամարի հարցերով զինուորները դարձեալ այդ մարդիկն են, որոնց դիտաւորութիւնն է ժամանակ անցնել տալ և, այդպէս, նոր դէպքեր, նոր փոփոխութիւններ ստեղծել։ Երուսաղէմի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՂՍՏԱՆՈՒՄ*)

—

Արշալոյսը դեռ չը բացված մենք դուրս եկանք Հաղբէից։ Ճանապարհը թէև շատ դժուարին էր, տեղ-տեղ նոյնիսկ անտանելի, բայց շատ հետաքրքրական էր։ Մերթ, շեղվելով Սամուրեան հովիտից, ոլորապտոյտ զառիվերով բարձրանում էինք լեռների կատարները և ապա իջնում հովիտը։ Յաճախ մենք անցնում էինք ուղղակի հեղեղատների թողած քարքարուտ հետքերի վրայով, որոնք ճանապարհի տեղ էին ծառայում։ Կառապանս բացատրեց, որ գարնանը կառքերի համար բոլորովին անմատչելի են այդ ճանապարհները։ Եւ դա շատ հասկանալի էր, որովհետև հէնց այժմ մի քանի ցամաքած գետակների միջով անցնելիս, կառքը լցվում էր ջրով։ Տեղացիք, իրանց բնակարանների նման, սայլերն էլ են յարմարեցրել իրանց բնական միջավայրին. Դաղստանի սայլերը բոլորովին այլ ձևով են շինված. նրանք 2 անիւ ունեն միայն, և այդ անիւներն էլ սովորականից չափազանց բարձր են. այդպիսի սայլերով միայն հնարաւոր է, հեղեղների ժամանակ, հաղորդակցութիւն պահպանել։

Միջավայրն ու կենցաղը մի ուրիշ հնարագիտութեան էլ են հասցրել դաղստանցիներին։ Ասացի, որ նրանց առուները մեծ մասամբ շինված են անմատչելի լեռների կատարները և ապա իջնում հովիտը։ Ցաճախ մենք անցնում էինք ուղղակի լեռների կատարները և ապա իջնում հովիտը։

*) Տես «Մշակ» № № 187 և 203.

զօրաւոր և կուլտուրապէս շատ աւելի զարգացած մեծ ազգերն էլ այդ երկիրը կատարելապէս անխնամ վիճակի մէջ են թողել. հաղորդակցութեան միջոցների տեսակէտից Դաղստանն այսօր էլ նոյնն է, ինչ եղել է նախապատմական ժամանակներում. ընդամենը կէս վերստ հեռաւորութեան վրա գտնվող առուները միանգամայն զուրկ են միմեանց հետ յարաբերութիւն ունենալու հնարաւորութիւնից։ Ինչպէս ինձ պատմում էին, և դա շատ հասկանալի էլ է, Դաղստանի լեռներում բազմաթիւ բնական հարբուտութիւններ կան թաղված, ինչպէս օրինակ՝ անդիկ, ծծումբ, պղինձ, երկաթ և այլն։ Բայց քանի որ ճանապարհներ չը կան, ոչ և ինչպէս կը գնայ այդ հարստութիւնները մշակելու։ Մի քանի փորձեր եղել են, սակայն գործը թերի են թողել հէնց նոյն պատճառով։

Առաւօտեան ժամը 9-ին մենք հասանք Սամուրեան շրջանի (округъ) սահմանում գտնվող Չայխանէն, ուր և մի կէս ժամով իջևանեցինք։ Այդտեղ երկու ռուս անասնաբուժական ֆելդշերների հանդիպեցի, որոնք բացատրեցին, թէ իրանք այդտեղ ուղարկված են կարանտին պահպանելու, որովհետև հարևան շրջանում տաւարի մէջ ժանտախտ հիւանդութիւնը կայ։ «Վերջապէս,—մտածեցի ես,—գոնէ այդչափով էլ կառավարութիւնը հոգատարութիւն է ցոյց տալիս այս մոռացված երկրի մասին»։ Սակայն հիացմունքս երկար չը տևեց։ Ֆելդշերների հետ խօսակցութեան մէջ էինք, երբ մի լեզգի վազելով եկաւ ու սկսեց խօսակիցներիս բացատրել, թէ իր մի եզը հիւանդացել է, և թախանձագին խնդրել, որ գնան օգնութիւն հասցնեն։ Ֆելդշերները՝ ոչ մէկը տեղից չը շարժվեց, սառնասրտութեամբ պատասխանելով թէ ի զուր է իրանց գնալը, քանի որ ոչ մի դեղ և միջոց չունեն ձեռքի տակ։

— Վերջապէս, մեզ խօս չեն ուզարկել այստեղ բժշկութեամբ պարապելու,—ասացին նրանք ինձ, կարծես թէ արդարանալով,—մեզ հրամայված է միայն կարանտին պահպանել։

Այդ չայխանէից մինչև Ախտի 45 վերստ է, որ մենք անցանք 5 ժամում։ Թէ հաղրեում, թէ այդ ամբողջ ճանապարհին և թէ յետոյ Ախտիում իմ ուշադրութիւնը խիստ գրաւեց և մի ուրիշ բան. այդ այն է, որ այդ շրջանի լեզգուհիները վերին աստիճանի գեղեցկուհիներ են։ Ամենից զարմանալին այն է, որ նրանց մեծագոյն մասը շէկ է, կապոյտ աչքերով և խիստ սպիտակ մորթով։ Կանանց այդ գեղեցկութիւնը տեսնելուց յետոյ միայն ես ըմբռնեցի, թէ ինչու գահընկէց սուլթան Համիդը միշտ Դաղստանի աղջիկներով էր լցնում իր հարէմը։

— Ամուսնացած ես,—հարցրի ճանապարհին կառապանիս, որը, մոռացայ ասել, տեղացի չէր, այլ Սիմբիրսկից եկած մի երիտասարդ թաթար։

— Ամուսնացած եմ, բայց ոչ այս երկրում,—ասաց նա։—Այս երկրում աղջիկները շատ թանգ են։

— Ի՞նչպէս թէ թանգ են,—հարցրի զարմացած։

— Այո, չէ՞ որ կինը այստեղ փողով են առնում։ Մեզ մօտ էլ փողով են առնում, բայց մեզ մօտ անհամեմատ էժան է։ Այստեղ առնուազն պիտի վճարել 2—3 հարիւր բուբլի մի աղջկայ համար. պատահում է, որ 1000 ր. էլ են վճարում, իսկ ես վճարել եմ ընդամենը 15 բուբլի։

— Եթէ այստեղ այդպէս թանգ են կանայք, ապա աղքատները ի՞նչպէս են ամուսնանում,—հարցրի։

— Աղքատները իրանց կանանց մեծ մասամբ փախցնում են,—բացատրեց կառապանս այնպիսի անվրդով տոնով, որ կարծեց թէ խօսքը ոչխար կամ գառը փախցնելու մասին էր։

Ծերեկվայ ժամը 2-ին հասանք Ախտի ամրոցը, ուր ընկերս՝ ամրոցի գլխաւորը (начальникъ) ինձ արդէն սպասում էր։

Ախտի ամրոցը ճիշդ մերկնագաբեան ամրոցները տպաւորութիւն է թողնում։ Նա շինված է 30-ական թագաւորներին, Նիկոլայ Առաջինի թագաւորութեան օրով, և գտնվում է երեք մեծ կիրճերի ճիշդ մէջտեղում։ Հէնց այդտեղ էլ միանում են Դաղստանի երկու կատաղի գետերը՝ Սամուրն ու Ախտի-չայը։

Ամրոցը իրանից մի բոլորովին առանձին աշխարհ կամ թագաւորութիւն է ներկայացնում. ունի իր առանձին անտեսութիւնը, իր սեփական ագարակները, հողերը, արհեստանոցներ, հիւանդանոց և այլն։ Իր ժամանակին այդ ամրոցը, անշուշտ, մի ուրոշ դեր է կատարել Դաղստանի պատմութեան մէջ, բայց ներկայումս, կարծում եմ, նա այլևս ոչ մի դեր չունի, չէ կարող ունենալ և ոչ ոքի էլ պէտք չէ, այլ պարզապէս նոյն լեռների լանջերումն են գտնվում։ Ոմն ու ցանքը այդպիսի բարձրութիւնից իջեցնելու համար՝ դաղստանցիք գործ են ածում փոքրիկ սանդակներ, որ յաճախ բարձած ցած են սահեցնում առանց անասունների օգնութեան։

Տեսնելով այդ անմատչելի առուներն ու անանցանելի ճանապարհները և ի նկատի առնելով այդ վայրի բնութեան զաւակների կիսավայրենի, կատաղի ու քաջ բնաւորութիւնը, մարդ ակամայից մտածում է, թէ այդ ինչպէս է պատահել, որ դարերի ընթացքում զանազան ազգեր, թէկուզ հէնց արաբների արշաւանքի ժամանակից սկսած, միմեանց ետևից յարձակվել են այդ երկրի վրա և միշտ նուաճել այդ անմատչելի երկիրն ու քաջ ժողովուրդներին։ Արդեօք երկրի այդպիսի անմատչելիութիւնը չէ՞ եղել Դաղստանի հեշտութեամբ նուաճելու գլխաւոր պատճառը։ Առաջին անգամից դա պարադոքս է թւում, բայց իրապէս ուրիշ կերպ դժուար է բացատրել։ Դաղստանի լեռնական ցեղերը, իրանց երկրի անմատչելիութեան, հաղորդակցութեան միջոցների կատարեալ բացակայութեան շնորհով, դարեր շարունակ ապրել են միմեանցից բոլորովին անջատ և իբրև միմեանց խիստ թշնամի ցեղեր ու հնարաւորութիւն չեն ունեցել միմեանց հետ սերտ կապվելու և մի ամբողջական ազգութիւն կազմելու։ Եւ հէնց դրա համար էլ նրանք միացել են միշտ թոյլ իրանցից աւելի զօրաւոր և բազմամարդ ազգութիւնների հանդէպ։

Ցաւը նրանումն է, որ նուաճող աւելի

*) Տես «Մ'ակ» № № 199, 202 և 203.

**) Ցաղրիս գրողը Թիֆլիսի բօսպային կոմիտէին ներկայացրել է, այդ մտքով մի պատճառաբանված զեկուցագիր, որը հաստատութիւն էր ստացել և ուղղվել հանրապետական մինիստրութեանը։ Եթէ նոր օրէնգիծը քննութեամբ ուշտաց, այս ժամանակ Թիֆլիսը արդի կը դասվի Բ. կարգում։ Գ. Ջ.

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԸ

IV*)

Պատենտի ոչնչանալովը կանհետանայ և մի խոշոր անարդարութիւն։

Այժմ պետութեան մէջ գտնվող բոլոր քաղաքները և նահանգները հարկատուութեան տեսակէտից բաժանված են չորս դասի— մայրաքաղաքները առանձնացված են։ Ամէն մի դասի պատենտի գները զանազանվում են հարևանիցը 20 տոկոսով։ Իսկ ինչն է հիմք ծառայում մի տեղին այս կամ այն դասին վերագրելը։ Բաւական անորոշ յայտարարներ. բնակչութեան առաւել կամ պակաս քանակութիւնը, առևտրի, արհեստների և արդիւնագործութեան զարգացման չափը, անշարժ կայքերի գինը և դրութիւնը, զօրաբաժիններ բնակվելը (расквартированіе войскъ) և այլն։ Օր. Թիֆլիսը՝ սկսած 1860-ական թուականներից միշտ եղել է ամենաբարձր դասում (Ա.)՝ Վարշավայի, Կիէվի, Խարկովի, Լօձի, Օդեսայի, Ռիգայի և Ռոստովի շարքում։ Ո՞վ կը պնդէ սակայն՝ թէ դա արդարացի է Թիֆլիսի համար։ Բաւական է ասել, որ Բագուն դասաւորված է Բ. կարգում, ուրեմն այնտեղի պատենտները Թիֆլիսից 20% պակաս են։ Եւ Թիֆլիսը, եթէ հաշուելու լինենք այս 40 տարվայ ընթացքում, որ գոյութիւն ունի պատենտը, մեր հաշուով գանձարանին տուել է մէկ միլիոնից մինչև 1½ միլ. բուբլուց աւելի հարկ։ Որ Թիֆլիսը պիտի միայն Բ. դասում լինէր, մենք կարող ենք ապացուցել նոյնիսկ պաշտօնական վիճակագրական հիման վրա։ Չենք ծանրանում այդ ապացոյցների վրա, ի նկատի առնելով լրագրական յօդուածի բնոյթը**)։

Տեղերի դասաւորման անհետանալը առաւել կը զգացվի գիւղական առևտրի վրա։ Այժմ վերջին գիւղը և ամենաբարեկարգ գաւառական քաղաքը գտնվում են միևնոյն դասում, վճարելով պատենտի միևնոյն գինը, որ ակնյայտ անարդարութիւն է։

Վերջապէս կան մի շարք ուրիշ թերութիւններ, որ կը զգացվին պատենտի վերացնելովը։ Ցիշենք մի երկուսը։ Պատենտ ձեռք բերելու համար մարդիկ երբեմն ճանապարհորդում են 100-ական վերստեր, կորցնելով և՛ ժամանակ և՛ փող։ Իսկ եթէ զանազան յարգելի պատճառներից զրկված պատենտը չէ վերցված, ապա առևտրականը ենթարկվում է տուգանքի։ Կամ երբեմն մանր վաճառականին դժուար է լինում հարկը այս գլխից միանուագ վճարելը, իսկ նոր օրէնքը նշանակում է երկու մէջտեղ՝ տարվայ սկիզբը և վերջը։

Այսպէս թէ այնպէս, բոլոր խոշոր վաճառականները և արդիւնագործները, որոնք բօրսաների, առևտրական զանազան ներկայացուցչական մարմինների անդամներն են և ուրեմն ունեն վճռական ձայն մինիստրութիւնների խորհուրդներում ուղղակի կամ անուղղակի կերպով և դրանք են կազմում Պետական Դումայի մեծամասնութիւնը (յանձին հոկտեմբերեան կուսակցութեան), որ պիտի հաստատէ նոր օրինագիծը, մի բան պիտի պինդ յիշեն. խոշոր առևտրի և արդիւնագործութեան անմիջական շահն է պաշտպանել մանր առևտուրը։ Չէ՞ որ վերջինս է սաղացնում ապրանքները, միջնորդ ծառայելով խոշոր ծախող-արդիւնաբերողների և սպառողների միջև։

Ահա թէ ինչ տեսակէտից պիտի նայել բէֆօրմին և ոչ միայն ի նկատի առնել, որ օրէնագիր մեծամասնութեան ներկայացու-

---

ԲԱՆ

ԴԱՂՍՏԱՆՈՒՄ*)

—

Արշալոյսը դեռ չը բացված մենք դուրս եկանք Հաղբէից։ Ճանապարհը թէև շատ դժուարին էր, տեղ-տեղ նոյնիսկ անտանելի, բայց շատ հետաքրքրական էր։ Մերթ, շեղվելով Սամուրեան հովիտից, ոլորապտոյտ զառիվերով բարձրանում էինք լեռների կատարները և ապա իջնում հովիտը։ Յաճախ մենք անցնում էինք ուղղակի հեղեղատների թողած քարքարուտ հետքերի վրայով, որոնք ճանապարհի տեղ էին ծառայում։ Կառապանս բացատրեց, որ գարնանը կառքերի համար բոլորովին անմատչելի են այդ ճանապարհները։ Եւ դա շատ հասկանալի էր, որովհետև հէնց այժմ մի քանի ցամաքած գետակների միջով անցնելիս, կառքը լցվում էր ջրով։ Տեղացիք, իրանց բնակարանների նման, սայլերն էլ են յարմարեցրել իրանց բնական միջավայրին. Դաղստանի սայլերը բոլորովին այլ ձևով են շինված. նրանք 2 անիւ ունեն միայն, և այդ անիւներն էլ սովորականից չափազանց բարձր են. այդպիսի սայլերով միայն հնարաւոր է, հեղեղների ժամանակ, հաղորդակցութիւն պահպանել։

Միջավայրն ու կենցաղը մի ուրիշ հնարագիտութեան էլ են հասցրել դաղստանցիներին։ Ասացի, որ նրանց առուները մեծ մասամբ շինված են անմատչելի լեռների կատարներին. նրանց ցանքսերն ու արտե-

*) Տես «Մշակ» № № 187 և 203.

ցիչները այսուհետև 5%-ի փոխարէն պիտի վճարեն 5%։ Պետ. Հաքարեան

Յ. Գ.—Վերջերս յայտնի եղաւ, որ հարստութեան տոկոսը 6 է լինելու։ Այս հանգամանքը բոլորովին չէ փոխում մեր դատողութեան ձևը։ Պ. Զ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ֆնձորստան (Խաչէնի գ.), 7 սեպտ.

Ամսոյս 2-ի գիշերը, ժամը 12-ին, գիւղում այրվեց Ակուբանց Միրզի տունը։ Կրակը պատահել էր անզգուշութիւնից։

Օդնութեան եղած գիւղացիները բահերով, ջրիչներով սկսեցին քանդել տան կտուրը, բայց ուշ էր. կրակը իր գործը տեսել էր արդէն։ Եթէ գիւղացիների եռանդուն ջանքերը չը լինէին, հրդեհն սպառնում էր անցնել հարևան տանը։ Ժամը գիշերվայ 1-ին կրակը հանգաւ։

Այժմ սրբազան պարտականութիւն է ծանրանում համագիւղացիների վրա. նրանք պարտաւոր են իւրաքանչիւրը շորով, հացով, փողով օգնելու՝ տունը հող ու մոխիր դառած, անօթևան մնացած Ակուբանց Միրզի կնոջը, որ, զրկած այդ անասելի դժբաղդութիւնից, այնքան է ծեծել ոտներն ու գլուխը, որ կիսամեռ վիճակում է գտնվում։ Թող օտար քաղաքներում ցրված համագիւղացիները յիշեն իրանց ընկերոջ պատահած դժբաղդութիւնը և օգնութեան ձեռք կարկառեն՝ ով ինչով կարող է, թէ փողով և թէ հագուստով։

Այս տարի բերքը առատ է. բայց պտուղներ չը կան։ Գիւղում փոքրիկ երեխաների մէջ աչքացաւ հիւանդութիւնն է տարածված։

Գիւղը զրկված է բժշկական հսկողութիւնից և թողնված է բաղդի քմահաճոյքին։ Լ. Յովսէփեան

Խարկով, 10 օգոստոսի

Մեր դպրոցի ու աղօթատան հոգաբարձութիւնը երկար լետարգիական քնից յետոյ կարծես ուզում է արթնանալ և աւելի զգաստ աչքով նայել իր պարտականութիւնների վրա։ Դեռ մինչև օրս աղօթատան գլխին դամոկլեան սրի պէս կախված է 12,500 ր. պարտքը, որի %-ները նոյն իսկ ժողովուրդը անկարող է տալու, մինչև դրրսից օգնութիւն չը լինի։ Այս օրերս մեզ մօտ կայացաւ հոգաբարձական ժողով, որը եկաւ այն որոշման, որ աղօթատան բակում գտնվող մի-յարկանի շինութիւնը, որ այժմ 600 ր. տարեկան եկամուտ է բերում, տեղիս հողային բանկերից մէկում գրաւ դնելով՝ պէտք է փող վերցնել և շինութիւնը լայնացնել ու երկյարկանի վերածել։ Այսպիսով, անկասկած, աղօթատան եկամուտը կաւելանայ, բայց այս հնարաւորութիւն չի տայ հոգաբարձութեանը աղօթատան պարտքը ժամանակին վճարելու. հարկաւոր է դիմել ուրիշ խելացի միջոցների։ Սակայն շատ ցանկալի կը լիներ, որ հոգաբարձական այդ որոշումը շուտ իրագործվէր և այդ մասին կայացված վճիռները հոգաբարձական արխիվին չը յանձնվէին հանգստանալու համար, ինչպէս այդ մեզ մօտ ընդունված է շատ անգամ։

Աղօթատունը, որ կարող է հեշտութեամբ քառաձայն խումբ ունենալ տեղիս կամաւոր ցանկացող հայ ուսանողներից, ինչպէս այդ եղել է առաջներում, երգեցողութեան կողմից ողորմելի դրութեան մէջ է գտնվում։ Մարդ ուզակի ամաչում է այլազգիներից, որոնք կիրակի օրերը յաճախում են մեր աղօթատունը։ Իողոքականները, հրէաները, կաթոլիկները, որոնց աղօթատները մերին մօտն են, միշտ բարձր են պահում իրանց աղօթատան նշանակութիւնը։ Այնտեղ երգում են և գեղեցիկ կերպով պատրաստված քառաձայն խմբեր, բայց մեր աղօթատունը զուրկ է այդ բաւականութիւնից։ Մեր միակ հայ ուսումնարանը լաւ զեկավարներ չունենալով այսօր կորցրել է ժողովրդի աչքում այն բարձր նշանակութիւնը, որ առաջ է ունեցել։ Հայերը իրանց զաւակներին պետական դպրոցներն են տալիս, զրկելով նրանց մայրենի լեզուի աւանդութիւնից, պատճառաբանելով որ ուսումնարանում ոչինչ չեն սովորեցնում։ Բայց ի հարկէ այդ սխալ կարծիք է, և վարժուհին, որ հրաւիրված է այս տարի հոգաբարձութեան կողմից 400 ր. ռոճիկով տարեկան, այսօր անգործ է, որովհետև ուսումնարանում սովորող աշակերտներ չը կան։ Բայց մթթէ այս բոլորը չէ տեսնում ու լսում մեր հոգաբարձութիւնը։ Զարմանալի բան է, թէ ինչու մեր Խարկովի հայ գաղութը, որ մի ժամանակ այնքան ճիգ ու ջանք է թափել աղօթատան և ուսումնարանի շէնքի կառուցման համար, այսօր նոյն ժողովուրդը և նրա զեկավարները հասարակական բոլոր գործերը թողել են պատահականութիւնների ու բաղդի կամքին։

Այս տարի տեղիս համալսարանում ընդունված են ընդամենը 24 հայեր։

Յ. Ս. Ադամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, սենատոր Վատացին նշանակվում է Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական։

◆ Չը նայած այն հանգամանքին, որ Թիֆլիս քաղաքը առևտրական շրջանառութիւնով բռնում է Բագուից երկրորդ տեղը, բայց և այնպէս արդիւնաբերական տուրք վճարելու տեսակէտից նա դրված է առաջին տեղում։ Ի նկատի ունենալով այդ, Թիֆլիսի բօրսային կոմիտէն միջնորդութիւն է յարուցել ֆինանսների մինիստրի առաջ, որպէսզի Թիֆլիսը հաշվի երկրորդ տեղում։ Այս միջնորդութիւնը ֆինանսների մինիստրը յանձնել է Թիֆլիսի արքունական պալատի քննութեանը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ժողոված տեղեկութիւնների համաձայն, պարզվել է, որ հանգուցեալ Ալ. Մատինեանի թողած կարողութիւնը եթէ դրամի վերածվի, կը ստացվի ընդամենը 200,000 ռուբլու դրամագլուխ։

◆ Վաճառականական գործերին լաւատեղեակ «Голосъ Москвы» թերթը հաղորդում է, որ բամբակի գինը օրէ-օր թէ ընդհանուր համաշխարհային, թէ Մոսկվայի շուկաներում աճում է։ Մոսկվայում սեպտեմբերի 11-ին ամերիկեան բամբակը գնվել է 15 ր. 90 կ.։ Գների բարձրանալու պատճառը՝ ոչ-բաւարար հունձն է Ամերիկայում, մէկ էլ՝ տեղական բանկիրների և սպեկուլատորների վարմունքը։

◆ Այս տարի Նորակոչ զինուորների ստուգութիւնը կը կատարվի գաղթականական կայանում (пересыльный пунктъ) երկաթուղու կայարանի հանդէպ։

◆ Արամեան հիւանդանոցի բացումը տեղի կունենայ այս տարվայ դեկտեմբերի 1-ին։ Բժիշկների տեղերի համար մինչև օրս ստացվել են 100 խնդրագրերից աւելի։ Գլխաւոր բժշկի պաշտօնը դեռ բաց է թողնված։

◆ Երէկ առաւօտեան ժամը 10½-ին «Հօրիզօն» թերթի դրասենեակում պատահեց մի ցաւալի դէպք։ Նոյն թերթի տնտեսական մասի կառավարիչ Իաւիթ Գալըստեանը ատրճանակով վերջ դրեց իր կեանքին, թողնելով կին և 5 մանր երեխաներ անապրուստ։ Ինքնասպանութեան շարժառիթներն առ այժմ անյայտ են։ Իրակն անմիջապէս ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց։

◆ Կիրակի, սեպտեմբերի 20-ին, առաւօտեան 11-ին ժամին, կը կատարվի Հաւլաբարի մանկական ձրի ճաշարանի օրհնութիւնը։ Այդ ճաշարանի հիմնադիրն է իշխ. Մ. Թումանօվան։ Ճաշարանը գտնվում է Հաւլաբարում, Մաղատօվսկայա փողոցի վրա։

◆ Զուբալովի ժողովրդական տանը, հոկտեմբերի 5-ին, մանմեդական գրաժատիկական արուեստի սիրողները կը ներկայացնեն «Հայրենիք»։

◆ Տիկ. Միսարօվայի խոնարարական կուրսերը՝ Թիֆլիսում բացվեցին սեպտեմբերի 14-ին։ Հրաւիրված են տիկ. Շտեմբերգ, որ խոնարարական արհեստը սովորել է Պետերբուրգի Գունստի կուրսերում։ Տիկինը սովորեցնում է եւրոպական և ռուսական կերակուրներ պատրաստութիւն։ Ասիական կերակուրների համար հրաւիրված է տեղացի մի ուրիշ տիկին։ Շաբաթը մի անգամ մասգիտութեան համար հրաւիրված է անասնաբոյժ Վեչինսկին։ Կուրսերին ներկայանում յաճախում են 15 հոգի, մեծ մասամբ հայուհիներ։ Պարապմունքները սկսում են ճաշից յետոյ ժամը 3-ից մինչև 7-ը, բայց մտադրութիւն կայ գործնական պարապմունքները գցել առաւօտեան ժամերին։

◆ Նօբել եղբ. նաւթարդիւնաբերական ընկերութիւնը, որ ձեռք է բերել Նաւթլուղում «Մաղութ» ընկերութեան պահեստը, սեպտեմբերի 16-ին դիմել է քաղաքային վարչութեանը, միջնորդելով թոյլատրել իրան երկու խողովակներ անցկացնել յիշեալ Նաւթլուղի պահեստից Կախէտինսկի խճուղով մինչև Մնացականեան կամուրջը։ Այդ խողովակներից մինը, 2 դիւյմ լայնութեամբ, կը ծառայէ զտված նաւթի համար, իսկ միւսը, 3 դիւյմ լայնութեամբ, հում նաւթերի համար։ Այդ միջնորդութիւնը յիշեալ ընկերութիւնը պատճառաբանում է նրանով, որ ցանկանում է դիւրացնել լուսաւորող մթերքների մատակարարումը քաղաքի մէջ, նաև մինչև մինիմում չափով այդ մթերքները էժան վաճառել քաղաքում։

◆ Վրաց էկզարխութեան շրջանում սկսվել են հոգևորականութեան համաժողովները՝ ընտրելու պատգամաւորներ Թիֆլիսում առաջիկայում կայանալիք համագումարի համար, ուր քննվելու են էկզարխութեան հոգևորականութեան կարիքներին վերաբերող հարցեր։

◆ Մեզ հաղորդում են, որ Դշլաղի ծխ. դպրոցի համար վարժուհի հրաւիրված է. պատասխան չը ստացողները ազատ են։

◆ Բաթումի շրջանի զինուորական նահանգապետի նախագահութեամբ տեղի է ունեցել մի խորհրդակցութիւն՝ որոշելու զէմստվոյին հաստատութիւնների մի տիպ Բաթումի շրջանի համար։ Խորհրդակցութեանը հրաւիրված են եղել նաև քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները և մասնաւոր անձինք։ Մեծամասնութիւնը ցանկալի է համարել ունենալ երկաստիճան զէմստվո—շրջանային և մի քանի գաւառական։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ալէքսանդրիայում (Եգիպտոս) նոյեմբերս հրատարակվել է Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի մէկ դրքոյկը՝ «Les Vêpres Siciliennes» (Սիցիլիական ժամերգութիւններ) վերնագրով։ Այս դրքոյկը կարելի է թարգմանութիւնը համարել այն աշխատութեան, որ վերջերս նոյն հեղինակը գրել էր հայերէն լեզուով՝ «Ադանայի Ջարդը և պատասխանատուները» խորագրով։ Տարբերութիւնը նրանումն է, որ ֆրանսերէն հրատարակութիւնը աւելի ճոխ և փաստալից է։ Դրքոյկի առաջաբանը գրել է Կահիրէում հրատարակվող «Le Progres» թերթի խմբագիր՝ հայասէր կոմս Դի-Մակի Դի-Կօլլատո։ Դրքոյկի հեղինակը նախ խօսում է կիլիկեան կոտորածի ծրագիրների մասին և ապա մատնացոյց է լինում, թէ առհասարակ հայերն ինչպէս խանդավառվել էին օսմ. սահմանադրութեան առիթով։ Դրքոյկի յետագայ գլուխները նուիրված են կառավարական չարակամութիւնների, Աբդիւլ Կադէրի և Ադանայում հրատարակվող «Իթիդալ» թերթի խմբագիր Իհսան Ֆիքրիի և շահատակութիւնների նկարագրութեանը։ Այդտեղ և մատնացոյց է արվում կիլիկեան ջարդերի հեղինակների վրա։ Դրքոյկի վերջում գտնվում են կարևոր վաւերաթղթեր, որոնք բոլորովին լուսաբանում են անօրինակ կոտորածի դրդապատճառները։

◆ Օգոստ. 10-ին Դուբլեան պատրիարքին փոխ-այցելութեան են գնացել Կ. Պոլսի խտալական, անգլիական և ռուսական դեսպանները՝ առանձին-առանձին։ Տեսակցութիւնները կրել են շատ արտաքին բնաւորութիւն։ Իտալական դեսպանի տեսակցութիւնը, որ տևել է մօտ 20 րոպէ, պրոտել է գլխաւորաբար կիլիկեան կոտորածների շուրջը։ Դեսպաններին ընկերանալիս են եղել դեսպանութիւնների առաջին թարգմանները։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Երկաթուղիներով ճանապարհորդելու համար ուսանողների արտօնութիւնները ընդարձակելու հարցը լուծուն ստացաւ ոչ ի նպաստ ուսանողների։ Չը նայելով այն բանին, որ մինչև անգամ մասնաւոր երկաթուղիների մեծամասնութիւնը համաձայնվում այն կարծիքը յայտնեց, թէ պէտք է աւելի լայն արտօնութիւններ տալ ուսանողներին, ֆինանսների մինիստրը միացաւ համաժողովի անդամների փոքրամասնութեանը, և միջնորդութիւնը մերժվեց։ Մերժման գլխաւոր հիմք ծառայեց ժողովրդական լուսաւորութեան և ուղղափառ դաւանութեան այն ատեանների անտարբեր վերաբերմունքը դէպի այդ հարցը, որոնց ձեռքումն է գտնվում ուսանող երիտասարդութեան կարիքների հոգացողութիւնը։ («Р. В.»)

◆ Ֆինլանդական սէյմի յատուկ յանձնաժողովը վերջին ընթերցանութեան ժամանակ ընդունեց օրինագիծը բանւորական օրվայ մասին։ Այդ օրինագծով բանւորներին չէ կարելի աշխատեցնել աւելի քան 57 ժամ շաբաթվայ մէջ և 10 ժամ օր ու գիշերվայ ընթացքում։ 18 տարեկանից մեծ բանւորներին իրաւունք է տրվում իրանց ցանկութեան համեմատ բանել լրացուցիչ 10 ժամ շաբաթական, միայն աւելորդ ժամերի համար վճարվում է բանւորներին օրավարձի մինչև 50 %-ը աւելորդ։ 16-ից մինչև 18 տարեկան հասակ ունեցող բանւորները կարող են աշխատել միայն 8 ժամ օրական, իսկ նրանք, որոնց տարիքը 16-ից պակաս է, պէտք է աշխատեն ոչ աւելի քան 6 ժամ։ Այդ օրէնքի զօրութիւնը պէտք է տարածվի ամեն տեսակ գործարանային, շինարարական և այլ ձեռնարկութիւնների վրա, նոյնպէս և արհեստաւորների գործարաններում։ Սէյմում ապահովված մեծամասնութիւն կայ ի նպաստ այդ օրինագծի։

◆ Սեպտեմբերի 11-ին Պետերբուրգի զինուորական նահանգական դատարանում սկսվեց այն մեծ գործի քննութիւնը, որը արձագանք է ստացաւ ամբողջ յայտնի ապրստամբութեան։ Այդ գործի նախնական քննութիւնը տևեց երկու տարի։ Այդ գործի մէջ աչքի ընկնող դէմքը փախած և մինչև այժմ ևս չը գտնված սվէաբորգեան բերդային արտիլերիայի շտաբ-կապիտան Ցիոնն է, որի բնակարանում տեղի էին ունենում գլխաւորապէս այն անձանց ժողովները, որոնք զեկավարում էին սվէաբորգեան ապրստամբութիւնը։ Սկզբում մեղադրվողները 18 հոգի էին, բայց դրանց կէսից աւելի փախաւ, և այդ օրը դատարանին ներկայացան 8 մարդ՝ հէլսինգֆորսեան վաճառականի որդի ուսանող Վօրօբիով, եղբայրներ Դաւիդ և Մէյեր Տրելիսեր և ֆինլանդական գարնիզոնում ծառայող զինուորներ Դալաչանով, Գրիշչենկով, Սուխարկով և Խայֆից։ Նրանք բոլորն ևս մեղադրվում են նրանում, որ պատանում էին յեղափոխական այն կազմակերպութեանը, որը նպատակ էր դրել իրան յեղափոխական պլօպագանդա անել ֆինլանդական գարնիզոնի զինուորների շրջանում։ Այդ կազմակերպութեան գլխաւոր բիւրօն գտնվում էր առաջ Պետերբուրգում, տեխնոլոգիական ինստիտուտի շինութեան մէջ, իսկ յետոյ փոխադրվեց Տէրիօկի։ Այդ յեղափոխական կազմակերպութիւնը մըտնում էր ռուսական սոց.-դէմօկրատական բանւորական կուսակցութեան կազմի մէջ։ Կազմակերպութեան անդամները սարքում էին միխիններ զինուորների մէջ Հէլսինգֆորսում, Վրբորգում, Սվէաբորգում և բացի դրանից նրանք զինուորների մէջ տարածում էին անլէգալ գրականութիւն։

(«Р. В.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Նոր դպրոց», ամսագիր, 1909, II տարի, յունիս-յուլիս, № 6—7.

«Նոր Դպրոցի» յունիս-յուլիսեան համարը հարուստ է մի շարք շահեկան յօդուածներով, վերաբերեալ թէ ընդհանուր դպրոցական խնդիրներին և թէ մասնաւորապէս հայ դպրոցների ցաւերին։ «Ամենայն Հայոց Կաթողիկոս» յօդուածում Ի. Յարութիւնեանը, շեշտելով այն խանդավառ ընդունելութիւնը, որով հայ ժողովուրդը հանդիպում էր ազգընտիր Հայրապետին, յոյս է տածում, որ Վեհափառի «հմուտ, փորձված և երկաթեայ ձեռքը կարող է անսայթաք կերպով զեկավարել մեր դպրոցական գործը» և բարելաւել դպրոցը, որի համար «անհրաժեշտ է հայ ժողովրդի գիտակից, ինտելիգենտ մասի և հայ ուսուցչութեան եռանդուն և գործօն մասնակցութիւնը»։

Այո, ժամանակ է, որ գիտակից հասարակութեան եռանդուն և գործօն մասնակցութիւնը տեղի ունենայ ազգային մի այնպիսի կենսական խնդրում, ինչպիսին է դպրոցական գործը և այն էլ այն ձևով ու կարգով, ինչպէս ընդունված է լուսաւորեալ երկիրներում։ Եւ մենք լիայոյս ենք, որ Վեհափառ Կաթողիկոսը, նախ քան մի որևէ ազգային եկեղեցական-վարչական կամ ուսումնական-դպրոցական հիմնական և սկզբունքային խնդրի մասին որոշում կայացնելը, հնարաւորութիւն կը տայ նախօրօք հրապարակ հանել այդ խնդիրը, մամուլի, ժողովների և մինչև իսկ կազմակերպված համագումարների ուսումնասիրութեան և քննադատութեան նիւթ դարձնել, և այս ճանապարհով ծեծվելուց ու լուսաբանվելուց յետոյ կարելի է խընդրին տալ օրէնսդրական մարմնացում։ Դոնէ այս անգամ խրատվենք անցեալից, որպէսզի չը կրկնվի այն ցաւալի երևոյթը, երբ հազար ու մի սուտ ու մուտ և կեղծ ու պատիր հնարներով ժուռք էին գործում վեհարան ազգի տնասուն ինքնակոչ փրկիչները, ստանձնում պաշտօններ կամ խորհրդականի դեր ու դարձնում վեհարանը իրանց անձնական նպատակների, միտումների և դեռ ևս չը լուծված ու չիրականացած համաշխարհային խնդիրների—«փորձերի» լաբորատորիա, որտեղ թխվում էին կօնդակ կօնդակի ետևից և մատուցվում յանկարծակիի եկած և յանպատրաստի բերված ապշած հայ ժողովրդին ի մարսողութիւն...

Ահա թէ ինչու «ներկայ դրութիւնից գոհ չէ հայ ժողովրդի ոչ մի խաւն ու դասակարգը», ինչպէս շատ իրաւացիօրէն պնդում է յօդուածագիրը. սակայն համաձայն չենք, երբ նա այդ ողբալի դրութիւնը բացատրում է «մի քանի ընտրեալների կամ ազնների անշնորհք զեկավարութեամբ»։ Այժմ յետին ժամկոչն էլ կը վկայէ, թէ ներկայ ողբալի կացութեան սկզբնաւորութիւնից աղաներին ոմքեր են փոխարինած։

«Մայրենի լեզուի ուսուցումը» յօդուածի շարունակութեան մէջ Գ. Ղազարեանը ծանրանում է գրաւոր պարապմունքների նշանակութեան վրա, թելով ներկայ գրաւոր դասաւանդման պակասաւոր կողմերը։ Քանի դեռ յօդուածը վերջացած չէ, մենք ձեռնպահ ենք մնում վերջնական կարծիք յայտնելուց։

Մնացեալ հետաքրքրական յօդուածներից առանձնապէս աչքի է ընկնում Նիւթի նորութեամբ Ֆ. Դրօսպի «Սեռական հարցը և պատանեկութիւնը» (թարգմ. Գ. Դարդիշեանի) յօդուածը։

Եւ իսկապէս մարդ սոսկում է, երբ սեռական խնդրի վերաբերեալ գիտնականների (Крафть-Эбингъ, Герцеги, Тарновскій և այլն) գրուածքներում մէջ բերված բազմաթիւ օրինակներից իմանում է, որ շատերի դժբաղդութեան, սեռական այլանդակութիւնների (половыя извращенія) և ֆիզիքական ու մտաւոր-հոգեկան ոյժերի քայքայման սկզբնապատճառը լինում են մանուկ-պատանիների ընկերները, փակ դպրոցների ապականիչ մթնոլորտը և մանաւանդ այն հանգամանքը, որ պատանին արբունքը մտնելիս ոչ օրից չէ ստանում ստոյգ և կանոնաւոր տեղեկութիւններ այդ իրան համար նոր ու անծանօթ, սակայն շատ անգամ նրա ամբողջ կեանքը դժբաղդացնող սեռական աշխարհի մասին։ Ոչ ծնողները, ոչ դաստիարակները և ոչ ուսուցիչները չեն տալիս պատանուն նրան հալումաշ անող հարցերի պարզաբանութիւնը, բոլորը խուսափում են մինչև իսկ ամենահեռաւոր ակնարկ անելուց։ Մինչդեռ ժամանակից կեանքը ամեն մի քայլափոխում լի է ամեն տեսակ հրապոյրներով և տալիս է պատանուն ամեն յարմարութիւնները սեռական գայթակղութեան։ Մենք պատանու գլուխը լցնում ենք ամեն տեսակ գիտութիւններով, սակայն խուսափում ենք տալ նրան էական ճշգրիտ տեղեկութիւններ՝ ծանօթացնելու նրան այն աշխարհի հետ, որը նրա կեանքում կատարելու է ամենախոշոր դերերից մէկը, մինչև իսկ դառնալու նրա համար մահու և կենաց խընդիր։ Համարձակ կարելի է ասել, որ ոչ մի գործում փարիսեցիութիւնը և կեղծիքը այնչափ մեծ դեր չեն կատարում, ինչպէս սեռական խնդիրների վերաբերմամբ։ Սակայն ՝երբ և ՝ով պէտք է ծանօթացնէ մատաղ սերունդը սեռական կեանքին և դրանից առաջացած չարիքներին ու սխալներին։ Հեղինակը առաջարկում է և «օգտաւէտ ու անհրաժեշտ» է համարում «իր ժամանակին երեխաներին սեռական հարցի մասին սկզբունքական ծանօթութիւն տալը», իսկ պատանեկական հասակի վերաբերմամբ հեղինակը պահանջ է դնում միանգամայն խուսափել, քանի որ այդ ժամանակաշրջանում «ապարդիւն են զրոյցները» սեռական խնդրի մասին։

Նաև այդ տեսակէտից շատ նպատակայարմար է համարում հեղինակը երկու սեռերի միատեղ դաստիարակութիւնը տորին և միջնակարգ դպրոցներում։ Արդէն տորին և միջնակարգ բազմաթիւ դպրոցներ գոյութիւն ունեն Հիւսիսային Ամերիկայում, Նորվեգայում, Շվէդիայում, Դանիայում։ Անգլիայում, Ֆինլանդիայում և այլն։ Այդ դպրոցներից շատերը պետական են կամ նպաստ են ստանում։

Գալով այն հարցին՝ թէ ինչպէս անել մեր դպրոցական կեանքի վերաբերմամբ, այս կասենք, որ մեզ մօտ ծնողների վրա յոյս դնելը միանգամայն ապարդիւն և մինչև անգամ վնասակար հետևանք կարող է ունենալ։ Որովհետև հայ ծնողների 99%-ը կարելի է ասել բացարձակ անպատրաստ է և զուրկ տակտից մեկնելու ու ծանօթացնելու իրանց զաւակներին սեռական կեանքը և մանաւանդ երբ ծնողներն իրանք ևս շատ ոգէտ են և վերին աստիճանի վայրենիներոյ հասկացողութիւն ունեն անչափահասների հոգեբանութեան մասին, մանաւորապէս սեռական կեանքի տեսակէտից։ Մնում է միայն, որ դպրոցի դասատուական հասակի ուսուցիչ-ուսուցչուհիները և մանաւանդ դպրոցական բժիշկները զբաղվեին այդ խնդրով և մշակեին մի շարք պահանջներ՝ երբ և ինչ ձևով ծանօթացնել սեռական կեանքին ուսանող մատաղ սերունդը՝ անխտիր՝ թէ տղաներին և թէ աղջիկներին։

Այս խնդիրը շատ լուրջ և կարևոր է մանաւանդ այն պատճառով, որ մինչև օր էլ

ինչպէս վկայում են գիտական հետազօտութիւնները,—դպրոցական մթնոլորտը, աշակերտական ընկերակցութիւնները, այլ և այլ պատահական ծանօթութիւնները, դեկավար-ուսուցանող մարմնի կատարեալ բացակայութեան պատճառով ծառայում են իբրև միակ աղբիւր, որտեղից անփորձ, անմեղ ու միամիտ երեխայ-պատանիները քաղում են սկզբնական տեղեկութիւններ սեռական կեանքի մասին։

Ա. Նազարէթեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԻ ՄԱՐԴԸ

—

Կահիրէ, 28 օգոստոս

Սովորած խօսքի հերոսներու հմայիչ ժեստերուն, սովորած պոռոտախօս ունայնաբաններու պոռչտուքներուն, որ գոգցես մեր բովանդակ գործունէութիւնը որակող և նոյն իսկ ոգևորող ազդակը եղած են, տարօրինակ հակատպաւորութիւն մը զգացինք, երբ չկարծած, չսպասած, լուռ ու մունջ տեղէ մը—գործի մարդէ մը—ժայթքած հուժկու և տպաւորիչ ձայն մը, աւագ, այլ ևս գերեղմանային՝ խօսքի մեր՝ հերոսներու քաղցրօրօր ներշնչման տակ ոգևորուած, տաքցած՝ ուղեղներուս վրայ հիասթափութեան շունչը սփռեց։

Ցաւալի է, որ այդ հաճելի անակնկալը, որ նոր և մինչ այդ տարօրինակաբար մեզ անծանօթ մնացած տարբեր աշխարհ մը կը բանար արգաւանդ, երկար չտևեց։ Հաղիւ զինք գտած, անմ արդէն պարտաւորուած ենք լալ և ողբալ այն դէմքը, որ մեր հասարակական կեանքի ընդհանուր յուսախաբութիւններու մէջ բարեշրջութեան յոյսը և նախաղրիւրը, ու մեր ազգային օդային գործունէութեան քաոսին մէջ՝ ապագայուրջ ու պարկեշտ ոգիի և դրական ուղղութեան մը նշանակը և դրօշակիրը կըլլար։

Յակոբ Պապիկեանն էր ատ, օսմանեան երեսփոխանութեան հայազգի անդամներէն մին, ընտրուած՝ մահմեդական քուէներու առաւելութեամբ մը և Մ. և Յ. կոմիտէին յայտնի աջակցութեամբ։

Այս թուումները՝ տրուած ըլլալով մեր յատկանիշական բնաւորութիւնը՝ արդէն իսկ բաւական էին Պապիկեանի անձնաւորութիւնը պահ մը մեր աչքին եթէ ոչ կասկածելի, բայց նուազ փայլուն, յարգելի և համակրելի դարձնելու։

Արդարև Ռոդոսթոյի հանգուցեալ երեսփոխանը հանդէս չէր եկած կանխորոշ անժամանակ ծրագիրներու մեծադղորդ բեռով մը, հոգ չէ թէ ատոնց այդ հանգամանքն իսկ գրաւականը մնար այդ ծրագիրներու դէպին անգործադրելիութեանը։ Ան, փաստաբան արհեստով, ծանօթ դէմք մը չէր հայութեան նեղ հորիզոնին մէջ, ըլլայ ազգային սովորական կեանքի, ըլլայ հերոսական շրջանակներու մէջ։

Ու ատոնք, կը կրկնենք, արդէն բաւական էին, որ այդ՝ այլևս պաշտելի՝ դէմքը տխեղծ, աննշան և ստուերի մէջ մնացած ըլլար, մեր անվերջ, անսահման տեսալաբարհին մէջ...

Եւ յետոյ, չէ՞ որ օսմ. խորհրդարանին բացուելէն ի վեր՝ ի բաց առեալ ընթացիկ գործերու շուրջը յուզուած վիճաբանութիւններու մէջ արտայայտած կարգ մը գործնական գաղափարներ, որ այդ պատճառով իսկ համ ու հոտ չէին կրնար ունենալ՝ հոն ալ, ուր մեծադղորդ ծրագիրներ ծեծուեցան և... մեռցուեցան, ուր խորհրդարանական անունի տակ քաղաքական և քաղաքացիական կեանքը կապող և ամուլ դարձնող ամէն տեսակի և իրար հակընդդէմ ծայրայեղ արտատոցութիւնները հոչակուեցան և մերժուեցան, արդիւնքէ աւելի զիրենք երկնող և զանոնք ընդդիմաբանող երեսփոխանները ցուցադրելու և փառաւորելու հոգածութեամբ, Պապիկեան այդ կեանքին և գործունէութեան իսպառ անյարմար, հոն ալ, ան մնաց միշտ նոյն անշուքը, լռիկը, լուրջը։

Եւ սակայն ինչքան մեծ և զգայուն հոգի մը կը պարփակէր անոր՝ այլ ևս մեռած, բաբախելէ դադրած՝ անձնաւորութիւնը։ Հոգեկան ինչ մեծութիւն մը, անվեհերութիւն մը, պարկեշտութիւն մը և արդարադատ ու անաչառ ոգի մը, որ պատիւ պիտի բերէր ոևէ առաջնակարգ խորհրդարանի մը և յառաջադէմ ազգի մը։

Եւ այդ բարձր հոգին, իր բովանդակ բարեմասնութեանց մէջ, լիովին կարենալ դնահատելու համար՝ պէտք էին կարծես կիլիկեան ահեղացունց կոտորածները։ Աղէտ մը, որուն հանդէպ չորս երկար և մահաբեր ամիսներ թիւրք ազատական կառավարութիւնը և Կարմիր Սուլթանը թօթափած, մերկացած առոյգ երեսփոխանութիւնը, ամենէն տարօրինակ լպիրշութեամբը, սինիկ պաղարիւնութեամբը ճըշմարտութիւնը ժխտել ջանացին։ Արդարութիւնը՝ սելանիկեան փրկիչ բանակէն կազմուած արտակարգ ատեաններու ձեռամբ և քաղաքակիրթ ազգերու առաջ, վիրաւոր ազգի մը անուան շուրջը ու տանջեալ հազարներով ջարդուած, խոցոտուած հայութեան կախազան հանուած անմեղ որդւոց մէջ իսկ դատապարտեցին՝ ապացուցանելու համար գոգցես թէ Թիւրքիան միշտ ալ պիտի մնայ անարդարութեանց դասական երկիրը։

Ափսոս, եթէ այս էր ըլլալիքը։

Ու մէկ տկար և մանաւանդ տկար հասարակութեան անդամ ծերունի մըն է, որ, օժտուած մեծ մարդկանց բարոյական կոթովովը, կուգայ խորտակել այդ անարդարութեանց արիւնոտ կուռքը, տարաբաղդ ազգի մը և մարդկութեան ազնիւ մասին անհամբեր սիրտերէն սփոփանքի հառաչանք մը խլելով, ու թիւրք կառավարութեան մինչ այն խուլ և անողոք շրջանակները ցնցելով։

Մաղթելով որ Պապիկեանի հուժկու աղաղակը, արդարութեան կանչող անլռելի կոչնակը, գերեզմանէն ալ հեռուներէն իր ձայնը լսելի ընէ նորակազմ օսմանցիներու ականջին՝ որ առանց արդարութեան, ըլլայ այդ հայուն թէ ուրիշի մը համար, պիտի կորչին, անհետին անտարակուսելիօրէն, մանաւորապէս մեզ կը մնայ երևան հանել պարտականութեան անմոռաց զոհին այն յատկանիշական դէմքը և ընթացքը, որ միակ ուղեցոյցը պէտք է մնայ մեր ունայնաբան, պոռոմախօս, շուտաթռիչ և գործը՝ սպաննող գործիչներուն և ներկայացուցիչներուն։

Մենք հայերս շատ պէտք ունինք, մեզ հետ բոլոր օսմանցիները նոյնպէս պէտք ունին այդ տիպի անձնաւորութեանց, որոնց հոչակը—սոյն պարագային՝ յարեցէք և անմահութիւնը—կը բղխի իրենց գործերէն, աւելի քան ՄՕասակար և պոռոտ հերոսներու զուր գոռումներէն, որոնց տուած արդիւնքը պիտի ըլլայ, դժբաղդաբար, աղէտալի, եթէ՝ ինչ որ բարեբաղդութիւն մը պիտի համարէինք՝ չըլլային և չըլլան իրենց խօսքերուն և ծրագիրներուն մնան զուր, ունայն և սնամէջ։

Ու Պապիկեանը, եթէ չունենար իսկ զինք ու իր գործի մարդու յիշատակը՝ այլ ևս անմոռաց դարձնող Ադանայի ջարդերուն քննիչութիւնը, իր գործակիցներին այս տեսակէտովը մեր միտքերէն ելլալու չէ, Պապիկեաններ ըլլալու և անոր նման, գործով միայն՝ օգտակար հանդիսանալու համար։

Գործի մարդ, ու չէ թէ խօսքի հերոս։

Միք. Նաթանեան

ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

—

Վերջացաւ սօցիալիստների կօնգրէսը Լայպցիգում, և վերջացաւ նրանով, որ կօնգրէսը հանդիսաւոր կերպով, միաձայն, ընտրեց Բեբէլին կուսակցութեան գլխաւոր կոմիտէի նախագահ, իսկ Զինգերին փոխնախագահ։

Բանն այն է, որ սօցիալ-դէմօկրատները Գերմանիայում, որքան էլ դա տարօրինակ թւար, կամաց կամաց աւելի չափաւոր են դառնում, և, որ ամենից աւելի զարմանալին է, անհաշտներից դառնում են օպպորտիւնիստ ատտիճանականներ։ Եւ այդ փոփոխութիւնը, սօցիալիզմի նախկին օրթոդօքս հիմունքներից հեռանալը տեղի ունի ոչ թէ երիտասարդութեան շրջանում, այլ կուսակցութեան ծեր, սպիտակահեր հիմնադիրների շրջանում։

Սարսափելի է արտասանել. գերմանական սօցիալ-դէմօկրատների մօտ անհետանում է մարկսիզմը։ Նրա դրօշակը դեռ ևս ծածանվում է կուսակցութեան վրա, բայց նրա շուրջը արդէն չը կան զինուորներ, որոնք պատրաստ լինէին զոհել իրանց անձը ի փառս նրա։ Փոխանակ «կուռի մէջ դուռ կը գտնես յաղթութիւնը», փոխանակ յեղափոխական պանսլաւիզմի ասպարէզ եկաւ սինդիկալիզմը, թէօրիաներից չափաւորագոյնը, որ հաշտվում է ամեն տեսակ կօմպրոմիսների հետ։ Դասակարգային կռիւի գաղափարը տեղ է տալիս պրոլէտարիատի կռիւ գաղափարին կապիտալի դէմ ամբողջ ընկերակցութիւններ կազմելու հողի վրա, նման անգլիական բանուորական դաշնակցութիւնների տիպի։

Գերմանական սօցիալիզմի այդ շարժումը դէպի աջ երեկ չէ սկսվել։ Առաջին անգամ նա երևան եկաւ 1905 թ.ին, Ենայի կօնգրէսում։ Այն ժամանակ արդէն երևացին «սինդիկալիստները» և «բէվիզիոնիստները»։ Նրանց ընդունեցին որպէս դաւաճանների և ճանապարհ գցեցին որպէս ֆանատիկոսների։ Բայց նրանք իրանց գործը կատարեցին։ 1907 թ.ին Հէսսէնի սօցիալ-դէմօկրատները, լանդտագի անդամները ներկայացան մեծ դքսին։ Ցիրաւի, նրանց վրա ապա թափվեցին ընկերների կրակներն ու կայծակները, բայց վերջ ի վերջոյ նրանց «ներեցին» և բուրժուազիայի հետ խաղաղ ապրելու գաղափարը մի աւելորդ քայլ արեց դէպի առաջ։ Կուսակցութեան ամենաայտնի և ամենատաղանդաւոր ներկայացուցիչը, բայխստագի անդամ Բէրնշտէյնը, որ պատկանում է «աստիճանականներին», ենթարկվում էր կատաղի յարձակումների «ուղղափառ» սօցիալ-դէմօկրատների կողմից, իսկ ներկայումս նա այնքան ամրացել է, որ հարկաւոր չը համարեց գնալ Լայպցիգի կօնգրէսին։ Այժմ օրթոդօքս սօցիալիստները յարձակվում են արդէն իրան՝ Կաուցկու վրա։ Բանից դուրս է գալիս, որ նա շեղվել է հաւատի հիմունքներից։ Սակայն կօնգրէսը չը տեսնված մեղմութեամբ վերաբերվեց ամէն տեսակ շեղումներին։ Սօց.-դէմօկրատներից շատեր եղել են, օրինակ, վերջին երկու տարիների ընթացքում զանազան արքունիքներում, հիւրասիրվել են իշխանական սեղանների վրա, և կօնգրէսը չընդունեց ծայրայեղների առաջարկութիւնը՝ «յանդիմանութիւն յայտնել պրօլետարական գործի դաւաճաններին»։ Ինքն Կաուցկին, որ դեռ նորերս կատաղի հակառակորդ էր սինդիկալիստներին, այժմ յայտարարում է, որ ոչ մի թշնամութիւն չէ զգում դէպի նրանց։ Վերջապէս, որպէս բոլորի պակաս, Բէբէլը, ծերունի Բէբէլը բարձրաձայն յայտարարում է.

— Եթէ հիւանդութիւնը չը զրկէր ինձ բէյխստագի նիստերին ներկայ լինելու հնարաւորութիւնից, ես, ի հարկէ, կը քուէարկէի յօգուտ կառավարութեան առաջարկութեան՝ ժառանգութեան վրա հարկը բարձրացնելու մասին։

Այդպիսով յայտարարութիւնը դեռ մի հինգ տարի առաջ ահագին վայնասուն կը բարձրացներ կուսակցութեան հիմնական սկզբունքներին դաւաճանելու և բուրժուազիայի հետ համերաշխութեան մասին, իսկ այժմ անտարբերութեամբ վերաբերվեցին դրան, չը նայելով Լէգէբուին, Շատտագէնի և այլ ուղղափառ սօցիալիստների որոտալից ճառերին։

Առհասարակ կանգնել է իրական շահերի քաղաքականութեան շրջանը, մինչև անգամ այնպիսի գօկտրինէօրների շրջանում, որպէս սօցիալ-դէմօկրատներն են։

— Մենք մեր կոմիտէները պահելու համար ծախսում ենք 1,200,000 մարկ տարեկան և ցանկանում ենք տեսնել այդ ծախսերի հետևանքները,—ասում էին հասարակ «ընկերները»։—Եթէ բուրժուազական կուսակցութիւնների կամ կառավարութեան առաջարկած միջոցը մեզ շահաւէտ է, պէտք է հաւանութիւն տալ և աջակցել նրան։

Բանը այնտեղ հասաւ, որ կուսակցութեան պարագլուխներից մէկը, սօցիալ-դեմօկրատական պաշտօնական «Vorwaerts» լրագրի աշխատակիցն, առաջարկեց մշակել մի ամուր պրօգրամ, որի հիման վրա հնարաւոր լինէր աշխատակցութիւն հաստատել բուրժուազական կուսակցութիւնների հետ։ Ճիշդ է, այդ առաջարկութիւնը չընդունվեց, բայց այնպէս մեղմ վերաբերվեցին դրան, որ անկասկած կընդունվի յաջորդ կօնգրէսին, 1911 թ.ին։

Սակայն գլխաւորը՝ հոչակաւոր մայիսի 1-ը—բանւորական պրօլետարիատի այդ դրօշակը—նսեմացաւ։ Կօնգրէսի շատ անդամներ յայտնեցին, որ այդ օրվայ տօնելը երկու տարուց աւելի չի տևի։

Սօցիալ-դէմօկրատները նոյն էվօլիւցիային են ենթարկվում, որին ենթարկվում են մնացած քաղաքական կուսակցութիւնները։ Աւելի էլ լաւ։ Կը պակասի միջդասակարգային յարաբերութիւնների սրութիւնը, և մարդկութիւնն ու կուլտուրան կարող են դրանից շահվել միայն։ («Б. В.»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացան 36, մեռան 14 հոգի։

Պետերբուրգի, Դօնի և Կիեւի պօլիտեխնիկական ինստիտուտներում և լեռնային ինստիտուտում ընդունելութիւնը բոլորովին վերջացաւ։

Դատաստանական պալատը դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ քննեց «Минувшіе Годы» ամսաթերթի խմբագիր Սելիվի գործը, որ մեղադրվում է քր. պատժ. 128-րդ և 129-րդ յօդուածներով. դատարանը մեղաւոր ճանաչեց անգգուշութեան մէջ և ենթարկեց 200 ր. տուգանքի։

Պետական բանկը արժեթղթերը և չեկերը վաճառելու ժամանակ վերացրեց կօմիսիա և կուրտաժ առնելը։

Մինիստրների խորհուրդը, քննելով իրան ներկայացված Ֆինլանդիայի սէյմի ամենանպատակ ուղերձը՝ 1908 թ. մայիսի 20-ին բարձրագոյնս հաստատված ֆինլանդական գործերը ուղղելու կարգի մասին, սէյմի ուղերձը գտաւ մերժելու արժանի։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ցամաքային զինուորական վարժութիւնները Ղրիմում յետաձգվեցին։

ՎԻԵՆՆԱ։ «Ֆրէմդենբլատը» լիազօրված է յայտնելու, որ սխալ է այն լուրը, թէ մտադրութիւն կայ կրճատել զինուորական վարչութեան զումարայատկացումները։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ Մ/Վ.։ «Պարսեվալ» օդապարիկը այսօր բարձրացաւ Վիսբադէն։ Գօնդօլում գտնվում էին ռուսական միսիան՝ բաղկացած պրոֆեսօրներից և օֆիցէրներից։

ՊԱՐԻԶ։ Որոշված է պարլամենտի նըստաշրջանը վերսկսել հոկտեմբերի 6-ին։ Վճռված է պետութեան հաշվ. «Բեպիբլիկի» կառաստրօֆայի տեղում արձան կանգնեցնել ի պատիւ զոհված օդաչուների։

Արտաքին գործերի մինիստրը յայտնեց, որ Բենիօյի պատասխանը Մուլայ-Հաֆիզի բողոքին՝ միաձայն ընդունված է մեծ պետութիւններից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէրղթերի կուրսերը

17 սեպտեմբերի

I կ. Ներք. փոխ. խ. տոմս.	453 ր.	— կ.
II » » »	337 ր.	— կ.
III Ադնւակ. բանկ. »	304 ր.	50 կ.
4% Պետական բենատ	87 ր.	87 կ.
5% Պետ. Ադնւ. բանկ գր. թ.	95 ր.	50 կ.
4½% » » » »	88 ր.	25 կ.
4% » » » »	83 ր.	12½
3½% » » » »	79 ր.	— կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	95 ր.	50 կ.
5½% » » » »	88 ր.	25 կ.
4% » » » »	83 ր.	37½
5% Ներքին փոխառ. 1905 թ.		
I հրատ.	100 ր.	25 կ.
5% » II հրատ.	100 ր.	25 կ.
5% Արտաք. » 1906 »	100 ր.	25 կ.
5% » » 1908 »	100 ր.	25 կ.
4% Պետական գանձար.	100 ր.	— կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	94 ր.	30 կ.
Բերլին 100 մարկ	46 ր.	30 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	70 կ.
Թուրիզ 100 դրան	18 ր.	— կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր.	68 կ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ՍՈՒՆԻՕՑԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½,—11 ժ. աչքի, ներքին և դեղագրային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲԵՐԵՍՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Ց. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զբաղողները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԻԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր

Առաւօտեան ժամը 10—1

Երեկոյեան ժամը 5—7

Վելիամինովսկայա փող. № 8

(օ. մ.) 783. 100—17

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Ա. ՅԼԻՅՏԼԻՆ

Ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւններ։ Արհեստական ատամներ։

Ընդունել. առաւ. ժ. 9-ից—երեկ. ժ. 7-ը։ Միքայէլեան պր. տ. № 22. (Անկիւն Սեմեոնովսկայա փ. № 3), մուտքը Սեմեոնովսկայա փողոցից։

(օ.մ.) 810. 100—12

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ

առանձնապէս ՍՏԱՄՈՒՐՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36, տ. Շաւանիձէի։

(օ. մ.) 100—16

ՄԵԳԻՏԻՆԱՅԻ

ՖԻԼԴՇԻՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուսացումներ (спринцов.), վերքի փաթաթումներ, դեղերի քսումներ (втираніе) և այլն։ Էլեֆտրականութիւն բէվմատիզմի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մանաւոր և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մանաւանդ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Ընդունելութիւնը 4—5 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրոնցօվի կամուրջին մօտ։

(օ. մ.) 857. 0—10

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1) Դասատեսր կրօնի Բ. տարի
2) Դասատեսր կրօնի Ա. » (բարեփ.)

Իմ կրօնի դասագրքերը ցանկացողները կարող են դիմել Կովկասի բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовск. ул 20)։ Զեղչ 20, 25 և 35%։

Սահակ ա.-ք. Սահակեանց

825 (և. ո.) 10—8

Օտալայի գործարանը

Ի. Գ. ԿԱԼԻՏԱԵՎԻ, Բօգօդուխօվում, Խարկովի նահանգ, առաջարկում է կարտօֆելի ալիւր։ Նմուշները և վաճառքի պայմաններն ուղարկվում են ըստ պահանջման։

(ու.) (М. 240089) 719. 8—8

Լոյս տեսաւ

ԳԱՍԸՆԿԵՐՈՒՆ

Առաջին տարվայ այբբենարան-ընթերցաբան

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Զարդարված գունաւոր պատկերներով

Դասագիրքն կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին

ԿԱԶՄԵՑԻՆ՝

Աբշակ Զիլինկարեան և Տիգրան Ռաշմաճեան

Աշխատակցութեամբ Ա.ա. Իսահակեանի

ԿԱԶՄՈՒՆ

Գինն է 50 կօպէկ

Գրախանութներին զեղչ 25%

Գումարով առնողներին 20% զեղչ

Պահեստը «Գուտենբերգ» գրախանութում (Թիֆլիս)։

(չ. ու. չ.) 948. 10—2

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ (արխիտէկտօր)

Հ. Յ. Կարապետեանց

Տեղափոխվել է Աւճարսկայա փող., № 9, տ. Տէր-Գաբրիէլեանի։ Ընդունում է կէսօրից յետոյ 4—7 ժամը։

953. 10—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՓՈՐՁՎԱԾ ՎԱՐԺՈՒՀԻ

մի երեխայի հետ ընտանիքում պարապելու համար։ Յիշեալ ընտանիքը գտնվում է Անդրկասպեան երկրի Մերվ քաղաքում։ Պայմանների մասին դիմել «Մշակի» գրասենեակին։

(ա. օ.) 949. 2—2

Իգդիրի պետական զեմստվոյին դպրոցի այգում

ԾԱՒՎՈՒՄ Է ԼԱՒ ՏԵՍԱԿԻ ԴԵՂԻՆ ԴԵՂՋ

(կօնսերվայի համար), որի 2 հատը կշռում է 1 ֆունտ։ ՊՈՒԴԸ 2 ՐՈՒԲԼԻ։ Ունենք 300 պուդից աւելի։ Պատրաստ կը լինի մինչև ներկայ սեպտեմբերի 25-ը։ Դիմել՝ Игдырь, Геворку Акобяну и Ншану Арутюняну.

952. 2—2

ԱԽԱԼՑԻԽԱՅԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ ՍԻՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

համար այս թատերական սեզօնին

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ԴԵՐԱՍԱՆ

Ցանկացողները թող յայտնեն իրանց պայմանները, դիմելով Ахалцихъ, Кеворку Арабяну.

(ա. օ.) 954. 2—2

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տօրինութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

Առեւտրական Գիտութիւնների Դասընթացքներ

(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավառ ձեռքի ուղղումն)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրօպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.

Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի հէնքում։

Կուրսերի հիմնադիրը՝ արևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(օ.մ.) 774. 20—14

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.

Большая Ванкская № 3.